# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
# 2026

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

## ԹԵՍՏ

ՄԱՐԶ ----------

ՔԱՂԱՔ/ԳՅՈՒՂ ----------

ԴՊՐՈՑ ----------

ԴԱՍԱՐԱՆ ----------

ԱԶԳԱՆՈՒՆ ----------

ԱՆՈՒՆ ----------

ՀԱՅՐԱՆՈՒՆ ----------

ՀԵՌԱԽՈՍ ----------

ԷԼՓՈՍՏ ----------

*Սիրելի՛ աշակերտ, թեստը բաղկացած է 40 հարցից:* ***Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,5 միավոր:*** *Պատասխանները ուշադի՛ր լրացրու վերջին էջում, որը և ենթակա է ստուգման:*

*Մաղթում ենք հաջողություն:*

**1** **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը:**

- խա-ամ, դ-խո, օ-արակ, պատ-գամբ
- գեղ-ուկ, գո-ի, անզի-ում, ստեր-
- զար-ուղի, փեր-, որ-ատունկ, զար-ոնք
- ընդ-ուպ, սուր-անդակ, ժպիր-, հեղ-եղուկ
- գանգու-, զմ-սել, ա-ժանիք, կե-ոն
- հանդիպակա-, ընչա-ք, լացուկո-, կ-կտուր
- խոտհար-, տա-դեղ, բազրի-, դիցու-

**2** **Տրված բառերից քանիսո՞ւմ գրության սխալ *չկա:***

թյուրիմածություն, սիգապանծ, պարսատիք, Ուկրանիա, կրթսեր, նվազացություն, առնչվել, անհողդհողդ, ոսկեծոպ, տրտմաշուկ, քողտիք, մեդալիոն, ամբարտավան, անքթիթ, անդորագիր

**3** **Ո՞ր բառերի կազմության մեջ սխալ *չկա:***

1. ամսեկան, 2. հոտնկայս, 3. տարեկետում, 4. սննկանալ, 5. բարյացկամ, 6. ի շնորհիվ, 7. անձիք, 8. չիներեն, 9. ջղայն, 10. այսինքս, 11. թույլատվություն, 12. ընտանեկան, 13. ֆիդային

**4** **Ո՞ր շարքերի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1. հինգ(հարկանի), նոր(ջուղայեցի), քաջ(առողջ), հարավ(աֆրիկյան)
2. հետ(այսու), ամսե(ամիս), շիլա(շփոթ), ի(սպառ)
3. ափ(հանում), հյուսիս(արևմտյան), խառն(ի)խուռն, առ(այն)
4. ի(մի)բերել, վաթսուն(մեկ), գեր(ծանր), գլուխ(գործոց)

**5** **Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անուններում են միայն առաջին բաղադրիչները գրվում մեծատառով:**

1) ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ԵՐԿՐՆԵՐ
2) ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ, ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ
3) ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
4) «ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆ, ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

**6** **Ո՞ր շարքերի բոլոր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. ջրասուզակ, ուղղագրական, հատկացուցիչ, հովվերգություն
2. հավիտենական, վերջնահաշվարկ, քննչական, կիսափտած

3. մաքրագրել, գիշատչային, գոտևորել, թախծամրմունջ
4. բարձրաթռիչ, միջօրեական, սննդարար, հրապուրանք
5. ջրածնային, աստղակուտակ, հանդգնել, սրտմտանք
6. մրցաշրջան, մանրադիտակ, կուսակցական, հրկիզում

**7** **Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:**

բամբասել-տրտնջալ, ակնածել-պատկառել, մորմոքել-կայծկլտալ, ակնակապիճ-ակնափոս, դրասանգ-երասան, երբեմնի-ժամանակ առ ժամանակ, բնորոշ-հատկանշական, դրանդի-հարևան

**8** **Ո՞ր նախադասություններում փոխանվանաբար գործածված բառ կա:**

1. Մութը որ իջավ, թևերը քարշ տալով, հայր արագիլը ուժասպառ հասավ բնին:
2. ….Խեղճը փռվել էր գետնին, և արյունը անընդհատ հոսում էր քնքուշ բերանից, աչքերը հանգել էին արդեն:
3. Որսի մի շուն երևաց, հոտոտեց Ավուն, անցավ, երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ՝ Պանինը:
4. Դռան մոտ գլխիկոր կանգնածը հարգանքով ճանապարհ տվեց նոր ժամանած բժշկին:

**9** **Ո՞ր շարքերում կան այնպիսի դարձվածքներ, որոնք տվյալ իմաստը *չունեն:***

1. ***աչքը ջուր կտրել*** – կարոտով, անհամբերությամբ սպասել, ***առաջին ծիծեռնակ*** – նախակարապետ
2. ***բարևը մոռանալ*** – շփոթվել, ***առաջին ձեռքից*** – առաջին պատահած մարդուց
3. ***բաքոսի տաճար*** – գինետուն, ***առաջին ջութակ*** – գլխավոր դեմք
4. ***երեսի ջուր*** – ամոթի զգացում, ***սիզիփոսյան աշխատանք*** – արժեքավոր մտավոր գործունեություն
5. ***երեսի վրա թողնել*** – անուշադրության մատնել, ***աչքը արյուն կոխել*** – սպառնալ
6. ***ջրի երես հանել*** – բացահայտել, ***աչք փակել*** – չտեսնելու տալ
7. ***ժամավաճառ լինել*** – իզուր ժամանակ վատնել, ***երեսից կախվել*** – թախանձել
8. ***արյունը ջուր դառնալ*** – սահմռկել, ***գլխին ավետարան կարդալ*** – խրատել

**10** **Ո՞ր տարբերակներում բառի սխալ բացատրություն կա:**

1. ***թեզանիք*** – հնամաշ զգեստ, ***բանուկ*** – աշխույժ երթևեկություն ունեցող
2. ***սնդուս*** – փայլուն երեսով գործվածք, ***ակրատ*** – թեթև նախաճաշ
3. ***ասպար***– պաշտպանական զենք, ***ճրագալույց*** – ճրագները հանգցնելու ժամը
4. ***սողոսկել*** – մեկի դեմ դավեր լարել, ***ծնծղա*** – երաժշտական գործիք
5. ***ականատ*** – թակարդ, ***աղբյուս*** – կավից պատրաստված շինարարական քար

**11** **Ո՞ր բառերն են կազմությամբ բարդածանցավոր:**

1. բազկատարած, 2. մեծաքանակ, 3. շանթարձակ, 4. հրաշապատում,

5. ակնածանք, 6. կանխակալ, 7. դասալիք, 8. հրապարակային,
9. տարուբերում

**12** **Բառերից քանիսի՞ վերջին արմատն է բազմավանկ:**

մեծապատիվ, գաղտնաձաձուկ, նվիրատվություն, ռազմաճակատ, գեղագանգուր, խորազնին, մեծաշնորհ, բարեխնամ, մելամաղձոտ, դասաբաշխում, բազմատեսակ, ինքնուսույց

**13** **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Նա ուզում էր անպայման շարունակել որոնումները, բայց ոտքերն այնպես էին դողում, սիրտն այնքան արագ էր զարկում, աչքերին այնպիսի մշուշ էր իջել, որ ստիպված եղավ կանգ առնել՝ մի քիչ խելքի գալու համար:*

1)



2)



3)



4)



**14** **Ո՞ր նախադասություններում փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1. Ցոլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:
2. Ոչինչ այնքան ներհակ չէ արվեստին, որքան կեղծիքն ու խաբեությունը:
3. Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
4. Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:

**15** **Ո՞ր շարքերի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1. երկնասլաց-գետնամած, ժուժկալ-անզուսպ, լայնախոհ-նեղմիտ, տարտամ-որոշակի
2. գժդմնել-ժպտալ, մարմնեղ-վտիտ, վեհերոտ-առյուծասիրտ, աչառու-կողմնակալ

3. նահանջել-ընկրկել, լռակյաց-շաղակրատ, քաջալերել-վհատեցնել, խախուտ-անսասան
4. հետամտել-խուսափել, սեղմ-ծավալուն, աճապարել-հապաղել, նենգ-ժպտադեմ

**16** **Տրված նախադասության վերաբերյալ պնդումներից որոնցո՞ւմ սխալ *չկա:***

*Դարեր առաջ՝ շատ հին ժամանակներում, քարե նույն քարավանը երկրի համար եղել է չընդհատվող մի պարիսպ՝ ամրակուռ ու անխախտ, որ, բերդից իջնելով, անցել է փրփրաբաշ գետը, գոտևորել ամբողջ քաղաքը՝ պահպանելով այն ասպատակողներից:*

1. Առկա է ընդամենը 5 ածական:
2. Գործածված բայերից միայն 3-ն են ածանցավոր:
3. Առկա է ընդամենը 4 դերանուն:
4. Նախադասության մեջ 2 տեսակի անկախ դերբայ կա:
5. Գործածված է միայն 1 կապ:

**17** **Ո՞ր տարբերակների բոլոր դիմավոր բայերն են դրված միևնույն եղանակով:**

1. Ամեն իրիկուն Իվան բեյը, թազբեհը ձեռքին, պիտի դուրս գար, դարպասի երկաթի կապը պիտի ինքը գցեր ու մի քար էլ դռանը դեմ աներ:
2. Երևում է, որ գարնան սկզբին առավոտից մինչև իրիկուն քրտնել են ինքը, գոմեշը և տան անդամները, ժամանակ չի եղել՝ ամեն օր գրեն, և մատենագիրը բավականացել է միայն շաբաթվա կարևոր դեպքերը արձանագրելով:
3. Բոլորը լուռ էին, և նա խոսում էր այնպես, կարծես պատմում էր միայն մեկին այն չարքաշ օրերի մասին, որ անդարձ անցել են, ծեծի և բռնության այն ժամանակների, երբ սով կար, և՛ սուր, և՛ բանտ:
4. Հավիտյան այդպես մնար այս փողոցը՝ բերդի պես դրսից անջատված խրամատներով, կապույտ ծուխը բարձրանար վերև, և ծխի միջից ինքը նայեր Արարատին ու հիանար, դրսից չհասներ ոչ մի հնչյուն, ոչ մի օտար աղմուկ, ու էլ ոչինչ չէր վրդովի իր հանգիստը:

**18** **Ո՞ր նախադասությունների դիմաց է նրանում առկա դերբայական դարձվածի պաշտոնը ճիշտ տրված:**

1. Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի՝ հինգական զույգ որմնասյուներով՝ հաստատված ամուր պատվանդանի վրա: *(ձևի պարագա)*
2. Հարսանիքների ժամանակ նորելուկ ու նշանավոր աշուղների հետ մրցում էին նաև տեղացիների մեջ հայտնի հորովել երգողները: *(ենթակա)*
3. Շիրվանզադեի բնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները չճանաչելն էր: *(ստորոգելի)*
4. Այս գործիչը Հայաստանի արվեստի օրերի առիթով Մոսկվա այցելածների խմբում էր: *(հատկացուցիչ)*

5. Ռուբեն Զարյանը օր առ օր գրի էր առել վերջին քառասուն տարում մեր արվեստի մեծերից տեսածն ու լսածը: *(ուղիղ խնդիր)*
6. Սևադա իշխանը ուրախանում էր իր դստեր բոլոր իղձերը կատարելով: *(հիմունքի պարարագա)*

**19** **Ո՞ր նախադասությունների դիմաց է նրա տեսակը ճիշտ նշված:**

1. Մեծամոր անունը կրող քաղաքը եղել է և՛ հեթանոսական կենտրոն, և՛ բարձրաշխարհիկ մարդկանց բնակավայր, և՛ երկրի մայրաքաղաքը: *(պարզ ընդարձակ)*
2. Մի՛ արա մերձավորիդ այն, ինչ որ չես ուզում՝ քեզ անեն: *(անենթակա)*
3. Արագ բարձրացա ձորակով ու քայլեցի դեպի Օհան ապոր այգին: *(թերի)*
4. Գետակի կա՞նչն է արձագանք տալիս, թե՞ մանկությունս է ձորերում լալիս: *(բարդ համադասական)*
5. Եթե ավագ քույրը առանձնապես չէր փայլում իր արտաքինով, ապա փոքրը մի առինքնող գեղեցկուհի էր: *(բարդ ստորադասական)*

**20** **Տրված տարբերակներից քանիսո՞ւմ բոլոր երեք սեռերից բայեր կան:**

- Այդ զինվորներից ոմանք երևում էին նաև Շուղանց քարատակում, թեև նրանք գերադասում էին հավաքվել ընկերներից մեկի տանը՝ այդ տունը վերածելով զորանոցի:
- Ահավոր ձմռանը դաշտերից ծտերը փախչում էին դեպի հարդանոցները, նապաստակները գիշերով թաքնվում էին դեզերի մեջ, գայլերը պտտվում էին գոմերի շուրջը, և նույնիսկ նրանցից հանդուգն էլ վազում էր գյուղի միջով՝ իր հետևից ձյունամրրիկի նման բարձրացնելով շների կաղկանձը:
- Երբ Անդրին այլևս չէր նվագում և սազը կոխում էր պարկի մեջ, ոչ ոք ձայն չէր հանում, կարծես ամենքն ուզում էին լսել մինչև վերջին հնչյունը, որ արդեն պոկվել էր լարերից և թրթռում էր, ինչպես արևից զարթնած ոսկե թիթեռ:
- Երբ քարատակում Անդրին իր սազն էր նվագում, մեկը հիշում էր իր կորած որդուն և սուգ էր ասում, մեկը հիշում էր օջախի քարը, այն շարմաղ աղջկան, որի սիրուց ինքը կախարդվել էր:

**21** **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերն են պատկանում միևնույն հոլովման:**

- տալ, տեգր, հորաքույր, սկեսրայր, աներ
- ուղղանկյուն, ազգանուն, մրրկաձյուն, խարշափյուն, գրավատուն
- մերժել, ամուսին, կաղին, թերակղզի, գետաձի
- ձմեռ, ժամանակ, երբ, շաբաթ, վայրկյան
- օձաձուկ, շքադուռ, հղում, որսաշուն, ծունկ
- կորյուն, Առաքել, սրբատեղի, ոչ ոք, պապ

**22** **Տարբերակներից քանիսո՞ւմ է անուղղակի խոսքը սխալ փոխակերպված:**

- *Նա ինձ հիշեցրեց, որ մենք ծանոթացել ենք անցյալ տարի, երբ նույն գնացքով վերադառնում էինք. ես՝ մեր փոքրակայանից, ինքը՝ իրենց ամառանոցից:*

- Մենք ծանոթացել ենք անցյալ տարի,- հիշեցրեց նա ինձ,- երբ նույն գնացքով վերադառնում էինք. Դուք՝ Ձեր փորձակայանից, ես՝ մեր ամառանոցից:

- *Տանտերն ինձ պատասխանեց, որ ես ինքս եմ կատակասերը. ինքը երեկ հավատաց իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ ես այսօր չեմ ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորս իրեն ծաղրում ենք:*
  Տանտերն ինձ պատասխանեց.
  - Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատացի իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- *Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին, որ իրենք բոլորը գիտեն, թե ինչպես վարվեն իրենց ունեցածի հետ. գնանք, իրենց հանգիստ թողնենք և իրենց մասին ոչինչ չպատմենք:*
  - Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. գնացե՛ք, մեզ հանգի՛ստ թողեք և նրանց մասին ոչինչ չպատմեք,- պատասխանեցին մեզ հարուստի ժառանգները:
- *Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է կուրացած հորը, որ խորհուրդ տա իրեն՝ ինչ հուշարձան կառուցի, որ անմահացնի իր և նրա անունը:*
  Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է կուրացած հորը.
  - Հա՛յր, խորհու՛րդ տուր ինձ՝ ինչ հուշարձան կառուցեմ, որ անմահացնեմ մեր անունը:

**23** **Նախադասություններից քանիսո՞ւմ են ընդգծված անդամները կապակցված խնդրառությամբ:**

- Լուսաթաթախ սպասումի մեջ **Մարանին** ինչ-որ խոռվք **էր պատել**:
- Նպատակս այն էր, որ այդ ուղևորության պատրվակով **կտրվեմ նրանից**:
- Բաբելոնում կավից **պատրաստվում էր ամանեղեն**:
- Երբ բոբիկ ոտքերով քայլում էր **առվի մոտով**, բահով ճումերն առվից դեն էր գցում:
- Անտառն աստիճանաբար խտանում էր, և **հանդիպում էին** հաստաբուն **ծառեր**:
- Այն նկարը, **որ** տարիներ առաջ **ստացել եմ** նրանից որպես նվեր, մինչև հիմա դրված է իմ գրասեղանին:

**24** **Ո՞ր տարբերակներում է բայաշարքի՝ տվյալ կազմությամբ բայերի քանակը սխալ նշված:**

*հոգնել, բոցկլտալ, կառչել, գրել տալ, մեռնել, զուգվել, բռնել, պատռտել, հիշեցնել, կանգնել, խառնել, թոցնել, երկնչել, օրհնել, կպչել, թթվել, մոլեգնել, խոցոտել, յուրացնել, լինել, մեկնել, լվացվել, քաշքշել, փառաբանել, մեղանչել*

1. սոսկածանցավոր – 4
2. կրավորական ածանց ունեցող – 3
3. բազմապատկական ածանց ունեցող – 4
4. պատճառական ածանց ունեցող – 2

**25** **Ո՞ր շարքերի բառերից ոչ մեկի արմատին (արմատներից մեկին) *չի կարող* միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1. -***ովի*** – կարեվեր, քաջակորով, պատուհան
2. -***ան*** – մենապար, քնքշօրոր, դարասկիզբ
3. -***ոն*** – կանամբի, գողտրիկ, հուսակտուր
4. -***ք*** – դառնաղի, կամարաձև, սիրասուն

**26** **Ո՞ր նախադասություններում անուղղակի խնդիր *չկա:***

1. Անկեղծության պահերին միշտ ներողություն էինք խնդրում մեզնից նեղացողներից:
2. Հազրոյի հայրենիքը եղել էր քարոտ Սասունը՝ այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները՝ ապառաժներ:
3. Հանկարծ մրրկաշունչ կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, շպրտվեց մի կողմ և թաղվեց գետնի մեջ:
4. Ծերունի կառապանը երկիմաստ ծիծաղում էր այդ մանրախնդիր մարդկանց վրա:
5. Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտի վրա հանգիստ պառկելով՝ աչքերը փակեց:
6. Նրա գրասենյակի ողջ կահկարասին մի խարխուլ սեղան էր, մի աթոռ՝ հազար ու մի թելերով կապկպած, մի թանաքաման և դիմումների համար թղթեր:
7. Ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից՝ փոխելով անուններն ու թվականները:

**27** **Տրված բարդ նախադասությունը քանի՞ բաղադրիչ պարզ նախադասությունից է կազմված:**

Երևանի ուղղիչ տունը նախկին նահանգական բանտն էր, որը, որքան հիշում եմ բանտարկյալների պատմածներից, ցարական ամենադաժան բանտերից մեկն է եղել, որտեղ անասելի տանջանքների են ենթարկել մարդկանց, ստորացուցիչ անարգելով՝ անողորմ խոշտանգել ու լլկել:

**28** **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ *չկա:***

1. Քաղաքաբնակ իրենց ընկերներին երբ հրաժեշտ տվեցին, գյուղի երեխաները շատ տխրեցին. մեկ էլ ե՞րբ կտեսնեն իրար:
2. Թափառիկ գուսանները ներբողում էին ասպետների անձնվեր ճակատումները, սխրալի գործերը և նրանք, անշուշտ, քեզ էին ներբողում, իմ սիրելի՛ կտրիճ:
3. Հիմա սենյակիս լուսամուտից բացվում է հարազատ բնանկար. լեռներ են, բարդիներ, իսկ ներքևում՝ կանաչների մեջ կորած ուրախ ձորակում, աղմկում է մի փոքրիկ գետակ:

4. Տեսնելով Վասակին անձով փոքր՝ (սպարապետը միջահասակից ցածր, փոքրամարմին տղամարդ էր) Շապուհը՝ այդ զոռոզ ու նենգամիտ բռնակալը, արհամարհանքով զննեց նրան:
5. Ո՞վ էր նա, ո՞ւմ աղջիկն էր, որտե՞ղ կարելի էր տեսնել կամ ծանոթանալ նրա հետ՝ այս հարցերը մեծ մտատանջություն էին պատճառում երիտասարդին:
6. Խորենի մահով, ցավոք սրտի, սպանվում էր նրանց ապահով ու անվիշտ կյանքը, վտանգվում՝ վաղվա օրը, որ չգիտես ինչ է բերելու իր հետ:
7. Աղոթարան մտավ բարձրահասակ մի աշխարհական՝ բարետես արտաքինով և անշշուկ քայլերով մոտենալով աղոթողին՝ կանգնեց պատշաճ հեռավորության վրա:
8. Դիլան դային ճմլում էր սևահատիկ խաղողը, և քրտինքի խոշոր կաթիլները երեսն ի վայր գլորվելով՝ ընկնում էին մածուցիկ շիրայի մեջ:

**29** **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակներում սխալ կա:**

*Եվ իրար վրա կրկնվող այս հրամանը մահապարտի հոգու մեջ այնպիսի սև հուսահատություն առաջ բերեց, որ ես զգում էի դրա՝ մահապարտի բազուկների միջից իմ հոգուն փոխանցվելը:*

1. ***առաջ*** – տեղի պարագա
2. ***փոխանցվելը*** – ուղիղ խնդիր
3. ***բազուկների*** – հատկացուցիչ
4. ***հոգուն*** – հանգման խնդիր
5. ***հրամանը*** – ենթակա
6. ***իրար վրա*** – տեղի պարագա
7. ***զգում էի*** – պարզ ստորոգյալ
8. ***դրա-*** հատկացուցիչ

**30** **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության ո՞ր տարբերակներում սխալ կա:**

*Նա չթողեց նույնիսկ՝ իրենից հարցնեի այդ դեպքի ու նրա անջնջելի տպավորությունների մասին, որ այդ րոպեին լույս էին տալիս հիշողության մեջ, ինչպես արևի ոսկե շողը՝ ծառերի հետևում:*

1. ***չթողեց*** – անկանոն պարզ բայ, անցյալ կատարյալ ժամանակաձև
2. ***իրենից*** – 3-րդ դեմքի անձնական դերանուն, դերանվանական հոլովում
3. ***տպավորությունների – ի*** հոլովման վերացական գոյական
4. ***նույնիսկ*** – սաստկական վերաբերական
5. ***մասին*** – հետադիր կապ
6. ***նրա*** – անձնական դերանուն, սեռական հոլով
7. ***լույս*** – հոլովական զուգաձևություն ունեցող գոյական
8. ***որ*** – ստորադասական շաղկապ

**31** **Ո՞ր տարբերակներում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը ճիշտ նշված:**

1. Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մագլցի սեգ ժայռերը: *(ուղիղ խնդիր)*
2. Մառախուղն ինձ թաքցրեց նրանց տեսադաշտից, ովքեր արդեն շուրջ երեք օր կրնկակոխ հետևում էին ինձ: *(հատկացուցիչ)*
3. Անչափ շնորհակալ եմ քեզ, որ ինձ այդ բոլոր փորձությունների միջով անցկացնողն ես: *(նպատակի պարագա)*
4. Այն օրը, երբ ձեռք պիտի մեկնեի իմ ընկերուհուն, պատահեց անակնկալ մի դեպք: *(ժամանակի պարագա)*
5. Ինչից է, որ չի սպառվում երգի քո պաշարը: *(ենթակա)*
6. Մուշեղը մտավ նրանց արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում: *(հատկացուցիչ)*
7. Այս գավաթը նրանն է, ով հաղթանակ կտանի սրամարտում: *(ստորոգելի)*
8. Ես կուզեի արևավառ անապատը ամայի, ուր մեն-մենակ ու վշտահար թափառեի ու լայի: *(տեղի պարագա)*
9. Ինչ լա¯վ է, Սո՛մա, որ քո կրակում վառվում եմ ես էլ: *(ուղիղ խնդիր)*

**32** **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպված բարդի:**

1. *Զորյանի հետ մտերմություն անողները գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:*

Ովքեր մտերմություն էին անում Զորյանի հետ, գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:

2. *Թումանյանի հոբելյանը հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:*

Թումանյանի հոբելյանը մի սովորական հանդես չէր, որ հետևյալ օրն իսկ մոռացվում է:

3. *Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորի՝ ապարանքից ելնելուն:*

Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, թե երբ է թագավորը ելնելու ապարանքից:

4. *Արքայորդին, այդ աղջկա կապանքներից ազատվելով, ավելի եռանդով սկսեց զբաղվել իր հետաձգված գործերով:*

Երբ արքայորդին ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց զբաղվել իր հետաձգված գործերով:

5. *Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:*

Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված է, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

6. *Մեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:*
   Հենց մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
7. *Խորամանկ դիվանագետ լինելով հանդերձ՝ չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամաբանությունը:*
   Չնայած խորամանկ դիվանագետ էր, չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամաբանությունը:
8. *Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նույն այդ բարիքն արտադրողներին:*
   Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նրանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
9. *Այդ երեկոյի ժամանակ՝ բոլոր արտահայտվողների՝ ելույթներն ավարտելուց հետո, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:*
   Այդ երեկոյի ժամանակ, երբ ավարտվեցին բոլոր արտահայտվողների ելույթները, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:

**33** **Տարբերակներից քանիսո՞ւմ միակազմ նախադասություն կա:**

- Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ.- Խավարում, ցավերում քարանալ Մեն-միայն…
- Ութ հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին: Միրգ ու փոշի: Անխիղճ արև: Շողամրցում Մասիսների, Արագածի:
- Առավոտից անձրև է գալիս:
- Քեզ անընդհատ զանգահարում էին:
- Հայերեն է խոսում, հասկանո՞ւմ ես, խոսում է հայերեն:

**34** **Տրված տեքստի համարակալված պարբերություններից որո՞ւմ ավելորդ նախադասություն կա:**

1. Քաղաքի պաշտոնական կենտրոններից ավելի հետաքրքիր և ուշագրավ են, եթե կարելի է այսպես արտահայտվել, «անպաշտոն» կենտրոնները, թեպետև նրանք, ըստ մեծի մասի, չեն վայելում հանրության կողմից այն խորհրդավոր հարգանքը, որ վիճակվել է պաշտոնական կենտրոններին: Բայց ինչո՞վ, ինչո՞վ է պակաս և ինչի՞ համար հասարակական հիմնարկություն չպետք է համարվի թեկուզ հենց, օրինակի համար, եկեղեցական մոմավաճառքի խանութը, որտեղից դուրս ելած բոլոր մոմերը կնքված են լինում, այո՛, իսկական նաիրյան կնիքով:
2. Կրկնում եմ՝ իզուր են միամիտ քաղաքացիք եկեղեցական մոմավաճառքի խանութի վրա աչքի ծայրով նայում. նա կենտրոն է, և որքան էլ ասածս չափազանցություն թվա, կարևոր կենտրոն:
3. Բայց որպես մի իսկական §քաղաքական ակումբ» և այն էլ ոչ միայն վարժապետների և հոգաբարձուների, այլև ազգային գործերով բոլոր հետաքրքրվողների համար,- որպես այդպիսի ահա մի հասարակական կենտրոն հայտնի է քաղաքում §Լույս» նավթարդյունաբերության ընկերության

այդտեղի ներկայացուցչի գրասենյակը: Եկեղեցիներին և ծխական դպրոցներին վերաբերող բոլոր խնդիրներն այդտեղ են արծարծվում:

4. Մոմավաճառքի՝ արտաքինից այդ անշուք խանութը, որ այնպես համեստ պահվել է փողոցի ամենախուլ անկյունում, էապես այն նշանակալից դերն է խաղում քաղաքի հասարակական կյանքում, ինչ դեր որ խաղում են քաղաքակրթված երկրներում քաղաքական ակումբները: Իսկ խանութների առաջ նստել է նաիրցի խանութպանը և ծույլ, անփույթ հորանջելով՝ սպասում է գնորդի: Եվ այդպիսի մի դեր խաղալու համար ամեն հարմարություններ ունի մոմավաճառքի խանութը. տաք է, քաղաքի կենտրոնում է գտնվում, և որ ամենակարևորն է, ազատ է կողմնակի այցելուներից:

1) 1-ին
2) 2-րդ
3) 3-րդ
4) 4-րդ

**35** **Տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1. Որոշիչը կարող է արտահայտվել բոլոր տեսակի դերանուններով, բացի փոխադարձից:
2. Որոշիչը կարող է ունենալ պարագա լրացում:
3. Որոշիչը կարող է հանդես գալ կապական կառույցներով:
4. Որոշիչը կարող է արտահայտվել բոլոր անկախ դերբայներով:
5. Հետադաս որոշիչը նախադասության մյուս անդամներից միշտ անջատվում է ստորակետով:
6. Որոշիչը կարող է արտահայտվել թվականի բոլոր տեսակներով:
7. Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է միայն հարաբերական դերանուններով:

**36** **Հ. Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1. «Թմկաբերդի առումը» պոեմում մահամերձ Թաթուլը կնոջ մատնության մասին իմանում է վերջին պահին, երբ իր զինվորների մեծ մասն արդեն սպանված էր:
2. «Գիքորը» պատմվածքը սկսվում է հետևյալ տողով «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք»:
3. «Փարվանա» բալլադում տեղի է ունենում մրցություն, բայց արքայադուստրը չի ցանկանում ամուսնանալ կռվում հաղթած քաջի հետ և խնդրում է կտրիճներին անշեջ հուր բերել:
4. «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլ իշխանը մատնության գիշերը երազին տեսնում է, որ Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
5. Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:

**37** **Հատվածներից քանի՞սն են Վ. Տերյանի բանաստեղծություններից:**

- Առկայծում են կարոտագին երազուն՝
  Հավերժաբար իրար կապված և բաժան:
- Կարծես թե մեկը ինձ է երազում,
  Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք…
- Ամրակուռ է մեր հոգին-դարերի զավակ՝
  Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:
- Արևը հանգչում է հեռվում,
  Գետից բարձրանում է մշուշ…
- Նվագով անուշ քանի՛ սիրեն
  Կանչում էին ինձ և կախարդում…

**38** **Ո՞ր պնդումներն են ճիշտ Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:**

1. Բակուրի տանը հյուրընկալված Տրդատը փախցնում է նրա գեղեցկուհի կնոջը՝ Նազենիկին:
2. Պոեմի նյութը Դ. Վարուժանը վերցրել է Մովսես Խորենացու պատմությունից:
3. Չորացած բարդու տակ Նազենիկին թաղելուց հետո հաջորդ գարնանը բարդին նորից ծլարձակում է ու վերընձյուղվում:
4. Բակուրը չի ցանկանում հյուրընկալել Տրդատին, քանի որ նա Տիրան արքայի փեսան էր:

**39** **Ա. Բակունցի պատմվածքներից բերված հատվածներից որո՞նց դիմաց է պատմվածքի վերնագիրը սխալ նշված:**

1. «Զարհուրանքով կարելի է նայել, երբ փողոցի անցուդարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրա-նրա համար տրեխ է գործում»: *(«Մթնաձոր»)*
2. «Հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը՝ մթին երկնքում, այն օրը, երբ նա սրունքները կախել էր առվակի ջրերի վրա և ծիծաղում էր»: *(«Միրհավ»)*
3. «Նեղ արահետով գյուղացիները գնում էին իրար հետևից, ինչպես կռունկի երամ, և թվում էր, թե բեռների տակ կքած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կլաներ նրանց»: *(«Սպիտակ ձին»)*
4. «Գիտե՞ս, երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես նույնքան պայծառ, ասես երեկ ես տեսել: Մարդ մոռանում է անունը, տեղն ու տարին, թե երբ է տեսել…, սակայն մնում են գլուխը, աչքերը. Կարծես մինչև մահ- գերեզման անջնջելի պիտի մնա այդ առաջին տպավորությունը»: *(«Ալպիական մանուշակ»)*
5. «Այդ մի՞տքն էր նրան զայրացրել, թե հոգնությունը,- մարդը մռայլ էր, որպես իրիկնապահին անտառում որսի դուրս եկած սոված արջ: Նա հասավ առաջին վրանին, ոտքով զարկեց շանը, որ, պոչը շարժելով, առաջ էր վազել՝ տիրոջը դիմավորելու»: *(«Մթնաձոր»)*

6. «Ես ճանաչեցի նրան… Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլի: Բայց չգիտեմ՝ նա ինձ ճանաչեց, թե ոչ»: *(«Խոնարհ աղջիկը»)*
7. «Ինչքա՜ն ժամանակ էր անցել այն օրից: Եվ մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները»: *(«Ալպիական մանուշակ»)*

**40** **Ո՞ր ժողովածուի կամ բանաստեղծական շարքի հիմնական թեմաներից է գիշերերգությունը:**

1. «Ոսկի հեքիաթ» (Վ. Տերյան)
2. «Հեթանոս երգեր» (Դ. Վարուժան)
3. «Ծիածան» (Մ. Մեծարենց)
4. «Եղիցի լույս» (Պ. Սևակ)

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1 | 3 |
| 2 | 6 |
| 3 | 2, 12 |
| 4 | 12 |
| 5 | 1 |
| 6 | 256 |
| 7 | 3 |
| 8 | 234 |
| 9 | 245 |
| 10 | 1345 |
| 11 | 259 |
| 12 | 7 |
| 13 | 1 |
| 14 | 123 |
| 15 | 234 |
| 16 | 14 |
| 17 | 13 |
| 18 | 2345 |
| 19 | 1234 |
| 20 | 1 |
| 21 | 1 |
| 22 | 4 |
| 23 | 4 |
| 24 | 123 |
| 25 | 14 |
| 26 | 27 |
| 27 | 5 |
| 28 | 13 |

| | |
|---|---|
| 29 | 1368 |
| 30 | 1368 |
| 31 | 1257 |
| 32 | 349 |
| 33 | 3 |
| 34 | 4 |
| 35 | 1457 |
| 36 | 5 |
| 37 | 5 |
| 38 | 23 |
| 39 | 45 |
| 40 | 3 |

*Ուշադրություն՝ Գնահատականը չի կլորացվում:*